

Սիրելի ուսուցիչներս՝
ՄՈՐՈՒՍ ՀԱՍՐԱԹՅԱՆԻ
ՊԱՐՈՒՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՍՈՒՐԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ
լուսավոր Ռիշատակին:

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Ա.

Հայերեն ձեռագիրը ծնվել է հայ գրերի հետ միասին: Երբ 405 թվականին Մեսրոպ Մաշտոցը Վաղարշապատ վերադարձավ Միշագետքից, իր հետ ուներ յուրաստեղծ գրերից ձևավորած հայոց այբուբենը և այդ գրերով ու նոր հորինած գրչության արվեստով Հռոմանոսի ձեռքով գրված առաջին հայագիր, հայերեն ձեռագիրը:

Ձեռագիր գրելու արվեստը սովորած աշակերտները Մաշտոցի ղեկավարությամբ Վաղարշապատում ա...ի ձեռն առեալ այնուհետև աստուածապործ մշակութամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել¹: Նրանք թարգմանում էին, հորինում և ընդօրինակելով բազմացնում էին հայերեն ձեռագրերն ու տարածում գավառները:

Հայոց գիրն ու ձեռագիրը ստեղծվեցին որպես հայ ժողովրդի պետականության և ինքնուրույնության պահպանման կարևոր գործոն, և այդ սրբազան նպատակին ծառայեցին հետագա բոլոր դարերում՝ և՛ պետականության, և՛ անիշխանության ու օտար տիրապետությունների տարիներին:

Ձեռագիրը պատմամշակութային հուշարձան է, տվյալ ժողովրդի պատմական զարգացման արտահայտություններից մեկը, ստեղծված որոշակի հանգամանքներում, տեղում և ժամանակում: Ձեռագիրն իր բովանդակությամբ ապագա սերունդներին փոխանցելիս ինքը ևս ներկայանում է որպես որոշակի ժամանակի գրչության արվեստը մարմնավորող նյութական և հոգևոր հուշարձան, սեփական գրով, դրանյութով, գրչության արվեստով և հիշատակարանով:

Հիշատակարաններով, նրանց բազմազանությամբ ու հարստությամբ հայերեն ձեռագրերը տարբերվում են ուրիշ շատ ժողովուրդների ձեռագրերից: Այս հանգամանքը պետք է բացատրել ձեռագիրն ստեղծող ժողովրդի պատմական ճակատագրով: Հայ ժողովրդի պետականության ու կրոնի ինքնուրույնության պահպանման և ամրապնդման համար ստեղծված հայոց գիրն

¹ Կոբջուհ, Վարք Մաշտոցի, ընագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ—ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941, էջ 55: Այսուհետև՝ Կոբջուհ, Վարք Մաշտոցի:

ու մատենագրութիւնը (որոնց մարմնավորումն է ձեռագիրը), շատ շուտ ղրկվեցին պետականութիւնից և մնացին երկրի ինքնուրույնութիւնը ոչնչացնող, ժողովրդի ոգին սպանող օտար նվաճողների դեմհանդիման: Զեռագիրը դարձավ ազգապահպանութեան, հավատապահպանութեան հզոր զինք: Զեռագիր գրողը, գրել տվողը, ձեռագիր փրկողը, պահպանողը՝ ազգի, հավատի, լեզվի, գրի պաշտպաններ էին և արժանի էին փառաբանութեան ու հիշատակ ունենալու: Եվ հիշատակարանները փառաբանում էին նրանց:

Հիշատակարանը ներկայացնում էր ձեռագիրը, նրա ծնունդը, ստեղծման հանգամանքները, նպատակը, պատմութիւնը: Այն ձեռագրի անկապտելի մասն էր, տվյալ ձեռագրի ստեղծման վավերացումը, նրա գրչութեան հանգամանքների պատմութիւնը:

Հիշատակարանը է մատենան, դիւան, պատմական մասն Սուրբ գրոց, յիշատակագրութիւն, արձանագրութիւն և վերջապէս մատենագրի կամ գրչի»²: Աստվածաշնչում կարդում ենք. «Հրամայեցի տեսանել ի մատենանս յիշատակարանաց»³, «...ուր կային գիրք յիշատակարանաց»⁴, «Զայս ինչ գրեալ էր ի գիրս յիշատակարանին»⁵ և այլն: Ընդգծված կապակցութիւնները («մատենանս յիշատակարանաց», «գիրք յիշատակարանաց») նշանակում են պատմութեան մատյաններ, պատմութեան գրքեր, պատմագրքեր: Եղիշեն ոչ միայն ամբողջ Ավետարանն է անվանում «յիշատակարան»⁶ և հույների պատմագրքերը («որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց»)⁷, այլև իր Պատմութեան առանձին Եղանակները. «Գրեցաւ յիշատակարանս յայս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. դի ամենայն որ զայս լուեալ գիտացցէ նզովս, ի նոտ արկցէ և մի լիցի ցանկացող գործոց նորա»⁸: Նույնպիսի մի հիշատակութիւն ունի Եղիշեն նույն Պատմութեան վերջում⁹:

Հայոց զորքի առաջ արտասանած նշանավոր ճառից հետո, Վարդան Մարմարի մասին Եղիշեն երբ գրում է. «Եւ ըստ պատերազմական կարգին՝ իբրեւ արանց զյիշատակարանս հանապազ երկրորդէր առաջի նոցա»¹⁰, նշանակում է «...բայ տղամարդկանց սլաւոյնքունները շարունակ կրկնում էր նրանց առաջ»¹¹, կամ «...ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեաց»¹², նշանակում է «նախնիների պատմութիւնները»:

² Նոր Հայկական Բառարան», հ. Բ, Վենետիկ, 1836, էջ 359:

³ «Աստվածաշնչում» Ա Նոր, Բ—26 (աստ և ամենուր յիշատակարան բառի ընդգծումը մերն է—Ա. Մ.):

⁴ Անդ, Ա Մոր, Զ—21:

⁵ Անդ, Բ Նոր, Զ—2:

⁶ Եղիշեն, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 81: Այսուհետեւ՝ Եղիշեն, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին:

⁷ Անդ, էջ 72:

⁸ Եղիշեն, անդ, էջ 140:

⁹ Եղիշենի սույն հիշատակարանը բերված է որպէս զրչի հիշատակարան: Սակայն բնութիւնը ցոյց է տալիս. որ ինչպէս վերը բերված, այնպէս էլ անտեսված հիշատակարանը հեղինակի գործն է: Այդ մասին տե՛ս աստ, էջ 6, ժանդապութիւն № 2:

¹⁰ Եղիշեն, անդ, էջ 104:

¹¹ Եվ ոչ «...բայ տղամարդկանց հիշատակութեան արժանի գործերը...» և այլն, ինչպէս Թարգմանութեան մեջ (ՏԵՄ, Եղիշեն, Վարդանայի պատմութիւնը, Երևան, 1958, էջ 96):

¹² Եղիշեն, անդ, էջ 72: Բարդամանութեան մեջ պահպանված է «հիշատակարանները»:

Հիշատակարան է կոչում Կորյունը Մաշտոցին նվիրած իր գիրքը. «... դմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել»¹³։

Այդպիսին է Փափսոս Բուզանդի Հայոց պատմութիւնը. «... Այսինքն ին սոքա շորք մատեանք և շորեքին միոյ իրաց յիշատակարանք են յիշեցուցիչ պատմութեանցն ազգացն Հայաստան աշխարհին... այսինքն կարգանցելոց իրաց, գործք և վարք մինչև ցիրաքանչիւր ելս յաշխարհէս»¹⁴։ Ստեփանոս Տարոնացին «Յիշատակարան» է կոչում իր Պատմութիւնը վերջում գրված հիշատակարանի խորագրում, «բան վախճանի փառատրական ի սպառնած Յիշատակարանիս»¹⁵։ «Գրեցաք զայս քաղցրաբան պատմութիւն հանդէսի դպրութեանց յիշատակարանաց առաջնոցն ոչ ընդհանրական,— դրում է Ստեփանոս Օրբելյանը իր Պատմութեան մասին,— այլ առանձին Սիսական աշխարհիս, և կոչի յիշատակաց մատեան»¹⁶։ Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը «գրական ճիշտակարան» է համարում Մ. Աբեղյանը¹⁷, իսկ Ստ. Մալխասյանը «Անմահ ճիշտակարան» հայ գրականութեան¹⁸։ Վերջինս «Պատմական ճիշտակարաններ» է համարում մեր Պատմագրքերը¹⁹։

Հունական մատենագրութիւնից արված մի թարգմանութեան վերջում կարդում ենք. «Զայսոսիկ մեզ Դորոթէոս՝ ի հեթանոսական և եբրայական համահաւաքեալ ասանդեաց՝ հռոմայեցի յիշտակարանաւք, զոր մեք որսէս պիտանի դիւրենկալ յայտնի բազմաց արարաք համագրութիւն եկեղեցական»²⁰։

Ձեռագիրը, որն իր մեջ պարունակած մեծ և փոքր իրադարձութիւնների ու մարդկանց պատմութիւնների մատյան-հիշատակարան էր, ժամանակի ընթացքում ունենում է նաև իր ստեղծման պատմութիւն-հիշատակարանը, որ գրվում էր մատյանի վերջում և կոչվում ձեռագրի հիշատակարան։ Հիշատակարան հասկացութիւնը պահպանելով իր բուն էությունը, այստեղ սահմանափակում է ընդգրկման շրջանակները, բավարարվելով ձեռագրի ստեղծման իրողութեան և նրա հետ առնչվող իրադարձութիւնների արձանագրմամբ։ Այն, առաջին հերթին, ձեռագիր-հուշարձանի ստեղծման վավերացումն ու պատմութիւնն է, հիշատակարանը։

Ձեռագիր մատյանը նաև հիշատակ է։ Ստացողը իր միջոցներով ձեռագիր է գրել տալիս ի հիշատակ իր և իր ծնողների, հարազատների և այլոց, և

¹³ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 23։

Նկատի չունենալով «յիշատակարանի» պատմութիւնն նշանակութիւնը, սույն նախադասութիւնը ճիշտ չեն թարգմանել աշխարհաբար և ուսերեն։ Աշխարհաբարում թարգմանված է այսպես. «մտածում էի մի առանձին մատյանի մեջ գրված հիշատակարաններ ծաղկեցնել» (էջ 23), փոխանակ «մտածում էի պատմութիւնը առանձին մատենագրել» (կամ «ծաղկեցնել»)։ Այդ է հաստատում նաև քիչ հետո գրված նախադասութիւնը. «Ուստի ...գրանալ անաշու հրամանէն հասելոյ, փութանակի և առանց յապաղելոյ զառաջի եղեալն (սկսալ) մատենագրել», այսինքն, անում է այն, ինչ քիչ առաջ մտածում էր։ «Առանձին» բառը վերաբերում է «յիշատակարանին», «պատմութիւն առանձին» մատենագրել, այսինքն, միայն Մաշտոցի և գրի մասին գրել։

¹⁴ Փափսոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, էջ 1։

¹⁵ Ստեփանոս Առողիկ, Պատմութիւն տիեզերական, ս. Պետերբուրգ, 1885, էջ 284։

¹⁶ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփլիս, 1910, էջ 505—506։

¹⁷ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 314։

¹⁸ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1968, ներածութիւն, էջ 13։

¹⁹ Փափսոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երևան, 1968, ներածութիւն, էջ 18։

²⁰ Բ. Սարգիսյան, Ցուցակ Վենետիկի, Վենետիկ, հ. Բ, 1924, էջ 44։

նվիրում որևէ մեկին կամ որևէ տեղի, դարձյալ ի հիշատակ: «Ընդ նմին», այն հիշատակ է նաև գրչի, ծաղկողների և ձեռագրի վրա աշխատող այլ անձանց, որոնք հիշվում են այդտեղ: Եվ այս մարդկանց համար ձեռագիր-հիշատակի հիշատակարանը՝ նրանց հիշատակների ընդունարանն է («ընդունարան յիշատակաց») և ձեռագրի ոտհղծման պատմությունը, «յիշեցուցիչ պատմութեանցը»:

Այդպիսի բնույթ ունեն և՛ ձեռագրի գրչի, և՛ մատենագրական երկի հեղինակի, և՛ թարգմանչի հիշատակարանները: Մովսես Խորենացին պատվիրատու Սահակ Բագրատունուն այսպես է գրում. «Ընկալեալ զքո խընդիրդ՝ աշխատասիրեցայց՝ ածել ի կատարումն, յանմահ յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քո գալոց են ազգք»²¹: Պատմական վիթխարածավալ դիպքերի հիշատակարան-պատմությունը հիշատակարան է նաև պատվիրատուի, ինչպես նաև Խորենացու հիշատակի համար, իրողություն, որն արձանագրված է նրա Պատմության Առաջարանում:

Ամեն անգամ ձեռագիրը արտագրելիս գրիչը գրում է իր հիշատակարանը, ուստի ձեռագրի հիշատակարան ասելով, հասկանում ենք նախ և առաջ գրչի հիշատակարան:

Ձեռագրերում գրչի կամ ձեռագրի ավարտման հիշատակարաններից լացի կան նաև հետագայում գրված հիշատակարաններ: Իր գոյության ընթացքում ձեռագիրը անցնում է ժամանակի միջով և ենթարկվում պատեհ և անպատեհ փոփոխությունների. նորոգվում է կամ լրացվում, գերվում է և փրկազնվում, վերստին կազմվում է, վաճառվում կամ նվիրվում, գործածվում իբրև դասագիրք և, իհարկե, միշտ ընթերցվում: Ձեռագրի հետ կատարվող սույն գործողությունները հաճախ իրենց գրավոր արտացոլումն են գտնում նրա ազատ էջերում, լուսանցքներում կամ մոծված թերթերի վրա: Սրանք ձեռագրի հետագայի հիշատակարաններ են: Եթե նախորդ հիշատակարանները ձեռագրի ստեղծմանը և ստեղծողներին էին վերաբերվում և գրվում էին գերազանցապես գրչի, ապա ստացողի և կամ մասնակիցներից որևէ մեկի ձեռքով, ապա հետագա հիշատակարանները վերաբերվում են նրա գոյատևմանը, նրա նորոգողներին, փրկողներին, պահպանողներին և ներկայացնում տարբեր ժամանակներ ու վայրեր: Այս բոլոր հիշատակարանները միասին ամբողջացնում են արդեն մեզ հասած ձեռագիր հուշարձանի պատմությունը:

Բ

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները առաջացել են ձեռագիր-մատյանի զարգացման որոշ աստիճանում, իրենց հերթին ապրել զարգացման, բարեփոխման պրոցես՝ ձևի և բովանդակության տեսակետից: Երբեմն հպանցիկ, երբեմն հիմնավոր իրենց մեջ ներառել են հասարակական տարբեր երևույթների մասին վկայություններ, հարստացել են ընդգրկմամբ և դարձել պատմագրական ինքնատիպ ստեղծագործություններ՝ իրենց առանձնահատկություններով:

Մինչև թ դարը թվականով ոչ մի հայերեն ձեռագիր չի հասել մեր օրերը, և նրանց հիշատակարանների մասին գաղափար կազմելը դժվար է:

²¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913, էջ 6:

Այդ պակասը պետք է վերագրել ոչ այնքան ձեռագրեր քիչ գրելուն, որքան դրանց ոչնչացմանը: «Թշնամիք աստուածապաշտութեան բաղում՝ անգամ արշաւեալ կորուսին ղկտակարանս եկեղեցւոյ և զվարդապետս նոյնպէս սպասեցին»²²,—դրում էր է դարի կեսերին Ներսէս Գ կաթողիկոսը: Նույն ժամանակաշրջանի պատմիչը ողբում է «զմատենից և ղկտակարանից հրկիզութիւն»-ը²³: Աղվանից կաթողիկոսների շարքը և նրանց գործը ամբողջացնել ղկտողանալով, Ժ դարի պատմիչը պատճառը նույնպէս համարում է «յանւրինաց» կողմից մատչանների հրկիզումը և նրանց գտնվելու տեղերի անհայտութիւնը: «Հրկէզ եղևալ են յանօրինաց և կտակարանք և սպասք, և տեղիք կալոյ նոցա մեղ անյայտք»²⁴: Իսկ 1170 թ. Բաղաբերդում, ուր «վասն անառիկ ամրութեանն յամենայն վանօրէից անդ էին կուտակեալ զսրբութիւնս և զգրեանս... կտակարանք յուրվք, որք թուով ասելի քան զտասն հազար զորս ամբարեալ էին անդ, ամենայն առհասարակ դերի վարեցան եւ ցան և ցիր եղեն ընդ երեսս աշխարհի»²⁵: Այդ բարբարոսութիւնը շարունակվում է նաև հետագա դարերում: 1292 թ. Հռոմկլան գրավող Բրտանկները «գերեցին և աստուածային սուրբ կտակարանսն, որ ի բազում ամաց ամբարեալ էր ամենայն կաթողիկոսաց և թագաւորաց... և զաւետարանսն ռսկետուփ մանրեալ փշրեցին»²⁶: Մինչդեռ աղբյուրների վկայութեամբ ձեռագրերի քնդորինակութիւնը Վաղարշապատի, Արշարունյաց, Սյունաց և այլ դպրոցներում մեծ չափերի էր հասնում: Միայն Արշարունյաց դպրոցում 2 դարի սկզբներին երեսունվեց վարդապետ ձեռագրեր էին արտագրում²⁷: Իսկ քանի՞ այդպիսի դպրոց է եղել: Դժբախտաբար շատ քիչ տեղեկութիւններ ունենք թե՛ այդ ժամանակի դպրոցների, և թե՛ ընդօրինակված ձեռագրերի մասին:

Մեղ հասած ինքնուրույն և թարգմանական մատենագրական երկերում պահպանվել են հիշատակարանային որոշ տվյալներ, որոնք պատկերացում են տալիս այդ ժամանակ ստեղծված ձեռագրերի և հիշատակարանի զարգացման նախնական փուլի մասին: Հեղինակները իրենց և պատվիրատուի անունները, գրութեան դրդապատճառների վերաբերյալ սուղ տվյալներ են թողել երկի խորագրում և առաջաբանում, իսկ թարգմանիչները՝ հավանաբար միայն վերջում, որոնք հետագա ընդօրինակողների կողմից դուրս են գցվել:

Ե դարում գրիչները հիշատակարան գրելու սովորութիւն չեն ունեցել: Այդ հաստատվում է հետևյալ փաստով. 1069 թ. Հովհաննէս գրիչը Նարեկա վանքում ընդօրինակում է մի Ավետարան, որի գաղափար օրինակի մասին գրում է. «Որ էր վկայեալ արինական յամենայն գիտնականաց Հայոց, ղոր ասէին աւանդութենէ դրեալ ձեռամբ Սրբոյն Մաստրովբայ վարդապետի և թարգմանչի»²⁸: «Աւանդութենէ» բառը ցույց է տալիս, որ ձեռագիրը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով դրված լինելը ավանդութեամբ է հավաստվել և ոչ թե

²² Ղ. Ալիշան, Հայագատում, հ. Ա, Վենետիկ, 1901, էջ 12:

²³ Անդ:

²⁴ Մովսէս Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1917, էջ 390:

²⁵ Մտնվաճոս Օրբելյան, Պատմութիւն նախնային Սիսական, էջ 336:

²⁶ Տ. Պալյան, Յուցակ Կեսարիոյ, Վիեննա, 1963, էջ 57:

²⁷ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 7: Տե՛ս ասա, էջ 12, ծթ. 5: Այսուհետև Յիշատակարանք:

²⁸ Մատենադարան, ձեռ. № 10434, էջ 285^ա.

ձևադրում գրված հիշատակարանի վկայությամբ: Այս նշանակում է նաև, որ նույնիսկ Մաշտոցը ձևադրում իր անունը չի գրել, այսինքն՝ հիշատակարան չի գրել:

Վկայություններ կան նաև Սահակ Պարթևի կողմից Ավետարան գրելու վերաբերյալ, գարձյալ շարադրված երրորդ դիմքով, որոնցից հնագույնը 1113 թվականից է. «Եւ ետու... աւարտել... ի ստուգ եւ յ(ը)նտիր գաղափարէ Սրբոյն Սահակայ թարգմանչի...»²⁹: Ղազար Փարպեցու Հայոց Պատմութիւն և Թուղթ առ Վահան Մամիկոնյան գործերը առաջին անգամ միատեղ արտադրող խմբագիր - գրիչը իր կատարածի մասին տեղեկություն է հաղորդել իր իսկ գրած Առաջաբանում և ոչ ձևադրի վերջում՝ հիշատակաբանում. «...Ձերորդ Պատմութիւնս Հայոց երանելի իմ Ղազար պատմագրեաց: Ընդ նմին գրեցաք և զԹուղթս...»³⁰: Սույն ձևադիրը դրվել է Ղազար Փարպեցու մահից հետո, բայց գրիչը հեղինակին ժամանակակից է և նրան անձամբ ծանոթ:

Վերջապես, Ե—Ձ դարերում ձևադրի վերջում հիշատակարան գրելու սովորութիւնը բացակայությամբ պետք է՝ բացատրել այն փաստը, որ շատ գրվածքներ և ձևադրեր (հետագայում գրված) ավարտվում են միայն «Փառք ամենասուրբ Երրորդութեանն, ամէն» նախադասությամբ, նույնիսկ այն դեպքում, երբ հիշատակարան գրելու համար բավականին ազատ տեղեր են եղել³¹:

Թարգմանիչների հիշատակարանների կամ հիշատակարանային տվյալների արձանագրման եղանակի վերաբերյալ շատ հետաքրքրական մի վկայություն է պահպանվել Ե դարից: 1368 թվականին արտագրված մի Կանոնագրքի վերնագրերից մեկում կարդում ենք. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն Եղնակայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց»³²: Այս գրված է Ե դ. սկզբներին, երբ Սահակ Պարթևը իր կանոններն էր շարադրում՝ նրանց մեջ մուծելով նաև կանոնական հին նյութեր: Նրանցից մեկը ավարտվում է վերջաբան-հիշատակարանով³³, որը հավանաբար հետագայում է շարադրված խորագրի հիման վրա. «Այս Սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէն՝ ի տեառնէն՝ Գրիգորէ, թարգմանեցաւ միայն յունէ ի հայ»³⁴:

Անշուշտ, այս տիպի և խորագրեր և վերջաբան-հիշատակարաններ շատ են եղել, որոնք հետագա ընդօրինակությունների ժամանակ համառոտվել կամ անտեսվել են, թերևս գրանյութը խնայելու մտահոգությամբ: Դեռևս 696 թվականին Փիլոն Տիրակացին Սոկրատ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմությունը թարգմանելիս. «մասնաւոր ժայրաբաղ» է անում

²⁹ Մատենադարան, ձեռ. № 6763, էջ 20:

³⁰ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 408:

³¹ Այսուհետ են Մատենադարանի № 5547, 2877 և այլ ձևադրերը:

³² Մատենադարան, ձեռ. № 659, էջ 227բ:

³³ Լ. Խաչիկյան, Օտարալեզու հայ գրականությունը IV դարում, «Բանբեր համալսարանի», № 1, Երևան, 1973, էջ 33:

³⁴ Մատենադարան, ձեռ. № 659, էջ 263ա:

«յաղագս նուագութեան քարտի և մագաղաթի»³⁵, իսկ Ստեփանոս Սյունեցիին խնդրում է պահպանել թարգմանութեան հիշատակարանը. «որք առնուք յաւրինակ յայսմանէ, գրեսցիք և զրանս զայսոսիկ առ ի յիշատակ բարեխաւսութեան առ Քրիստոս, զի դրեալք եղիցիք և դուք ի դպրութեանն կենաց...», փոխեցէք զրանս յիշատակի ի յոյս փրկութեան աշխատողացն և յիշողաց դասիս»³⁶ կամ գրիշն աղաչում է. «Գրեսցեն և զյիշատակարանս բովանդակ ի նմին և մի հատցեն ի սմանէ բան մի» (Մաաննադարան, ձևո. № 1347, էջ 418ա)։

Գ

Նթե ն և հաջորդ դարերից մեղ ամբողջական ձեռագրի հիշատակարաններ չեն հասել, ապա այդ ժամանակներից մենք ժառանգել ենք հարուստ մատենագրություն, որոնց առաջաբանները կամ խորագրերը հիշատակարանային տվյալներ են պարունակում մասնավորապես երկի բնույթի, հեղինակի ու ստացողի մասին։ Այդ առաջաբանները կոչվում են տարբեր անուններով—«Առաջաբանութիւն», «Նախագիտելիք», «Նախերգան», «Նախագիր», «Ներածութիւն» և այլն։ «Ամենայն ոք,—կարդում ենք առաջաբաններից մեկում,—որ զգիրս աստուածայինս ի ձեռն առնուցու, նախկի զմագրութիւն նորա ընթեռնու, և նովաւ հասու լինի՝ ևթե մարգարէական իցէ արդեալք, և եթէ առաքելական, կամ թէ ի ներշնչական արհեստից ի բանիբուն արանց ասացեալ, զի առաջաբանութիւն գրոցն է պատկեր նորին։ Զոր արինակ մարդ ի պատկերէն իւրմէ ճանաչի, նոյնպէս և գիրք ի նախերգանէն... Նւ այս ի մանկանց եկեղեցւոյ ի սկզբանէ աւանդեալ եղեւ, զի առ յապա կկեղցն համառատ բանիւ ի ցոյց և ի տեսիլ ածել զրաւանդակն... Քանզի նախադասեալ բանն՝ երիս եղանակս բացայայտէ. նախ ևթէ յորո՞ւմ ժամանակի գրեցաւ, և կամ թէ յո՞ւմմէ հարկաւորեցաւ, և կամ թէ յի՞նչ պէտս գրեցաւ»³⁷։ Մատենագրական երկը աշխարհ է գալիս, որպէս ձեռագիր։

Ինչպէս կտեսնենք, այս «երիս եղանակս» է ընկած նաև հիշատակարանների հիմքում, և այս տեսակետից առաջաբանները, որոշ չափով լրացնում, ավելի շուտ՝ լցնում են հիշատակարանների պակասը։

Իհարկէ, առաջաբանը և հիշատակարանը մատենագրական տարբեր միավորներ են ոչ միայն մատչանում զբաղեցրած իրենց տեղերով։ Սակայն տարբեր լինելով հանդերձ, նրանք կատարում են նաև միևնույն պարտականութիւնը՝ պատասխանելով «յորո՞ւմ ժամանակի գրեցաւ... յո՞ւմմէ հարկաւորեցաւ և... յի՞նչ պէտս գրեցաւ» հարցերին։ Լեյդ հարցերին հեղինակը պա-

³⁵ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 50։ Կամ «քարտէս ոչ ունելով բաւական» (Մատենադարան, ձևո. № 45, էջ 295ա)։

³⁶ Գ. Հովսեփյան, Անդ, էջ 54։

Հունարենից կատարված թարգմանություններում երբեմն թարգմանել են նաև հիշատակարաններ, «Պատմութիւն եւ խաւք Եղիազիրոսի Յաղագս սուրբ եւ փառաւորեալ հայրապետին Բարսղի» Լրկի վերջում կարգում ենք. «Նս Եղիազիրոս, գրեցի զյիշատակ սրանչեւեաց մեծի հայրապետին Բարսղի, որում ականատես եւ սպասաւոր լի, որ եւ յետ փոխելոյ յաշխարհէս երանելի քահանայապետին ևս կալալ զաթոռ եպիսկոպոսութեան...» (Բ. Սարգիսյան, Ցուցակ վեներաբլի, հ. Բ, էջ 44)։ Պահպանվել են նաև «Յաղագս Երկոտասան առաքելոց» երկի Գորոթեոսի և Գևորգ զորավարի Վարդի Պասիկրատեոսի հիշատակարանները (նույն տեղում, էջ 44, 31)։

³⁷ Սարգիս Ենուեմալի. Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, Կոստանդնուպոլիս, 1828, էջ 5։ Տե՛ս աստ, էջ 169։

աստիճանում է իր երկի առաջաբանում՝ իր խնդիրներին համապատասխան, իսկ դրիչը՝ իր արտագրած ձեռագրի վերջում, հիշատակարանի պահանջներին համապատասխան, որը վերաբերում է ոչ միայն բովանդակությանը, այլև ձեռագրի, գրության հանգամանքներին, և՛ ենթահարցերի պատասխանների միջոցով այն ընդարձակում՝ հնարավորության սահմաններում: Օրինակ՝ «Յորո՞ւմ ժամանակի գրեցաւ» հարցին հիշատակարանը հաճախ պատասխանում է ոչ միայն սոսկ թվականով (կամ միայն հայկական թվականով), այլ հոգևոր և աշխարհիկ տիրողներին հիշատակելով, նրանց բնութագրումով, կամ այդ ժամանակ տեղի ունեցող պատմական-քաղաքական, ռազմական իրադարձությունների ներկայացմամբ և այլն, որոնցով հիշատակարանը դառնում է պատմական կարևոր սկզբնաղբյուր:

Այժմ տեսնենք, թե մատենագրական երկերի առաջարանները ինչպե՞ս են լցնում հին շրջանի ձեռագրական հիշատակարանների պակասը:

Մեսրոպ Մաշտոցի մասին մեղ հասած պատմությունից տեղեկանում ենք, որ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի» գրվել է Քի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» (ԽՈՐԱԳԻՐ): Մինչ Կորյունը մտածում էր Հայաստան աշխարհի աստվածապարզ գրի, նրա ստեղծողի լուսավոր ուսման և հրեշտականման առաքելի կրոնավորության մասին Պատմություն գրել, նրան է հասնում այդ ժամանակ կաթողիկոսի տեղապահի պաշտոնը կատարող Հովսեփի խընդ-րանք-հանձնարարականները (առաջաբան)³⁸: Վերջում (վերջաբան) Կորյունը լրացնում է երկի հորինման հետ կապված տեղեկությունները, հայտնում է, որ ինքը Պատմությունը շարադրել է ոչ թե գրույցներից, «այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն՝ և առնթերակաց հոգևորական գործոց... և նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն»³⁹ և որ այն գրել է «յՕրինակ քաջալերիչ հոգևոր ծնունդոց իւրեանց և որք նոքօք աշակերտելոց իցեն յազգս աղգաց»⁴⁰:

Նղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի խորագրից և առաջաբանից տեղեկանում ենք, որ այն գրված է Դավիթ Երեց Մամիկոնյանի խնդրանքով, կոչվում է «Վասն Հայոց պատերազմին»⁴¹ և ունի յոթ եղանակ և այլն: Նղիշեի Պատմության մեջ պահպանվել է երկու հիշատակագրություն: Առաջինը Վեցերորդ եղանակի վերջում է⁴², որ հիշեցինք վերևում, իսկ երկրորդը՝ Պատմության վերջում, որը դուրս էր նետվել բնագրից⁴³:

Խորենացու Պատմության խորագիրը տվյալներ է պարունակում գրվածքի կառուցվածքի, հեղինակի և պատվիրատուի մասին, «Հայոց պատմութիւն, երիս հատուածս ասացեալ Մովսիսի Խորենացոյ ի խնդրոյ Սահակայ Բագ-

³⁸ ԽՈՐԱԳԻՐ, Վարդ Մաշտոցի, էջ 22, 24:

³⁹ Անդ, էջ 96, 98:

⁴⁰ Անդ, էջ 98:

⁴¹ «...Քրանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի, ով քաջ, վասն Հայոց պատերազմին հրամայեցեր...» Նղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, էջ 3, Հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 329:

⁴² Նղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, էջ 140:

⁴³ Մատենադարան, ձև. Ն 1888, էջ 122բ, հմմտ. Նղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, էջ XXII:

րատունություն⁴⁴։ Պատմությունն սկսվում է հեղինակի ողջունից՝ ուղղված ստացողին։ Այս և սրան հաջորդող գլուխներում պատասխան է տրվում առաջարանի վերը բերված հարցումներին։ Որոշ տվյալներ կան հեղինակի մասին «Ոգբ»-վերջարանում, գրքերն ու ցանկերն ամփոփող նախադասություններում⁴⁵։

Ղադար Փարպեցու Պատմության Առաջարանից իմանում ենք իրենից առաջ Հայոց պատմությանը նվիրված մատյանների ու նրանց հեղինակների, ապա իր մասին։ Հայոց Պատմության առաջին գիրքը դրել է Ագաթանգեղոսը⁴⁶։

Երկրորդ գիրքը գրել է Փավստոս Բաղանդը, շարունակելով այնտեղից, որտեղ Ագաթանգեղոսն ավարտել է իր Պատմությունը⁴⁷։

«Երրորդ Պատմութիւնս այս ի կարգէ նորին դրոց շարագրեալ տկարութեանս մերում»,—շարունակում է։ Փարպեցին և հասցնում՝ «մինչև ցօր սկզբան մարգպանութեանն Հայոց Վահանայ Մամիկոնէից տեառն և մեծի դօրավարին Հայոց և մարգպանին»⁴⁸։ Վահան Մամիկոնյանը ոչ միայն պատվիրում է Ղադար Փարպեցուն գրել Հայոց պատմություն (եւրոյ հասեալ հրաման առ իս Ղադար Փարպեցի), այլև հանձնարարում է թե որտեղից սկսել, ինչպես գրել և ինչու՞ այդպես գրել⁴⁹։

Է դարից ունենք թարգմանության, հեղինակային և ձեռագրի հիշատակարաններ։ Դավիթ Թարգման Տարոնացին Համազասպ Մամիկոնյանի (654—661 թթ.) հրամանով, Դամասկոսում թարգմանում է Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» ճառը⁵⁰։ Աբասի որդի Ձորափորեցին 678 թ. թարգմանում է Սեղբեստրոսի վարքը⁵¹, իսկ Փիլոն Տիրակացին՝ Ներսէս Կամսարականի պատվերով՝ Սոկրատի Եկեղեցական պատմությունը⁵²։ Այստեղ ա-

⁴⁴ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 1։

⁴⁵ Խորենացու Պատմության Առաջին գրքի ցանկն ավարտվում է այսպես. «Կատարեցան ցանկը Առաջին գրոց Մենդարանութեան Հայոց Մեծաց» (4), իսկ Գիրքն սկսվում է «Գիրք Առաջին, Մենդարանութեան Հայոց Մեծաց» (5) և ավարտվում «Կատարեցան գիրք Առաջին Մենդարանութեան Հայոց Մեծաց» (38)։ Երկրորդ գիրքն ավարտվում է «Բովանդակեցան գիրք Երկրորդ, Յառաջադիմութեան Հայոց Մեծաց»։ Երրորդ գրքի ցանկն սկսվում է «Աւարտումն Պատմութեան Հայոց Մեծաց» (251), «Աւարտեցան ցանկը Երրորդ գրոց, յանկեւանելոյ Պատմութեան Հայոց (Մեծաց)» (256), և, վերջապես, գրքի վերջում. «Աւարտեցան գիրք Երրորդ, յանկեւանելոյ Պատմութեան Հայոց Մեծաց» (366)։ Այս փաստերը ցույց են տալիս, որ Խորենացու երկը սկզբնապես ունեցել է «Պատմութիւն Հայոց Մեծաց» (ընդգծ. մերն են—Ա. Մ.) խորագիրը։ Խորենացու Պատմության վերնագրի հետ տեղի է ունեցել այն, ինչ Եղիշի Պատմության վերնագրի հետ (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 329)։ Մեր կարծիքով, Խորենացին այդպես է գրել և անվանել իր Պատմությունը, որպեսզի ապացուցի, որ Հայոց Պատմությունը սկսվում է ոչ այնտեղից, որտեղից Ագաթանգեղոսն է սկսել և Բուզանդը շարունակել, այսինքն, ոչ քրիստոնեական շրջանով, այլ ավելի վաղ, որ Մեծ Հայոց Պատմությունն ավելի հնից է գալիս։ Այս է պատճառը, հավանաբար, որ Փարպեցին իր Հայոց Պատմության մեջ Խորենացու Մեծ Հայոց պատմությունը չի հիշում, այլ շարունակում է Ագաթանգեղոսին ու Բուզանդին, դառնալով Հայոց Պատմության երրորդ գրքի հեղինակը։

⁴⁶ Ղադար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 1։

⁴⁷ Ղադար Փարպեցի, Անդ, էջ 1։

⁴⁸ Անդ, էջ 2։

⁴⁹ Անդ, էջ 5—6։

⁵⁰ Տճ՝ս աստ, էջ 16։

⁵¹ Սեղբատ Սեփապետիկոս, Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1887, էջ Ժէ։

⁵² Անդ։

ռաջին անգամ հանդիպում ենք ստացող ներսեհ Կամսարականի ընդարձակ հիշատակարանին: Սույն կրեթ հիշատակարաններն էլ դրված են երրորդ դեմքով: Վերջին կրկուսում նշված են թվականը, ստացողը և թարգմանիչը:

Անանիա Շիրակացին Անառատա կաթողիկոսի հանձնարարությամբ մինչև 665 թ. շարադրում է «Վասն սյրոց տանից Աստուծոյ» ճառը⁵³—«Յայտնութեան» և «Զատկի» տոներին նվիրված բաժիններով, որն ավարտում է. «...կազմեցի ես՝ Անանիայ որդի Շիրակայնոյ...»⁵⁴ վերջարան-հիշապակարանով: Իսկ «Քննիկոնի» գործնական թվաբանությունից առաջ Շիրակացին գրում է իր Առաջաբան-պատճառաբանությունը՝ համարողության արվեստը Հայաստան բերելու և «Քննիկոնը» գրելու անհրաժեշտության հիմնավորմամբ⁵⁵: Սույն շարադրանքն ունի և՛ հիշատակարանի, և՛ առաջարանի պահանջներին համապատասխան տվյալներ:

Մատենադարանի № 10680 ձեռագիրը, որը հայտնի է «Վեհամոր Ավետարան» անունով, հնությամբ հասնում է է դարձ Ավետարանների վերջում կան փոքր հիշատակագրություններ, ընդ որում Մաթևոսի վերջում հիշված է դրություն վայր «Սուրբ երրորդութիւն» վանքը: Վերջին թերթերը թափելու պատճառով, արդյոք, գլխավոր հիշատակարանը չկա:

Ինչպես ցույց են տալիս նշված փաստերը, Ը դարի երկրորդ կեսին հիշատակարաններն արդեն հարստանում էին: Այդ ժամանակի ձեռագրից արտագրված պետք է համարել Մատենադարանի № 3004 ձեռագիրը, որն ընդօրինակված է «գերի, մեղաւոր Վասիլի» ձեռքով, Կաղան քաղաքում, 1642 թ.: Վասիլը մասնագիտությամբ գրիչ չէ: Բավականին անկանոն է գիրը, իսկ բնագիրը՝ սխալաշատ: Սակայն ձեռագիրը ցույց է տալիս, որ նրա գաղափար օրինակը շատ հին է եղել: Ղուկասի և Հովհաննեսի Ավետարաններում, բոլոր ընթերցվածների («Աւետարանք գլխաւորք»), այսինքն, Ավետարանների գլուխների սկզբում, կարմիր թանաքով գրված է «Աւետարան ըստ Ղուկասոս»՝ 41 անգամ և «Աւետարան ըստ Յոհաննոս»՝ 56 անգամ: Սուրբին երկու Ավետարանները այդպես չեն: Այս բացատրվում է նրանով, որ ձեռագիրը երկու տարբեր գրիչներ են գրել (ինչպես նկատելի է հին ձեռագրերում), որոնցից մեկը պահել է իր ժամանակի գրության կարգը, մյուսը՝ ոչ: Այսպիսի նշումներով ձեռագիր առայժմ մեզ ծանոթ չէ: Ստեփանոս Սյունեցին Ը դարի սկզբում կարգավորում է Ավետարանների գլուխները բնագրում նշանակելու կարգը և հակառակ վերը նշված եղանակի, ընթերցվածները նշանակում է բաժանարարներով: Ուրեմն, մինչ այդ կամ այդ ժամանակ է դրվել սույն ձեռագրի գաղափար օրինակը և հիշատակարանը, որի մեջ տրված են Քրիստոսի կյանքի կարևոր դրվագները, և որոնք հետագայում դառնում են Ավետարանների նկարազարդման (մանրանկարչության) թեմաներ⁵⁶:

Հիշատակարանում տրված է ձեռագրի (տվյալ դեպքում Ավետարանի) բովանդակությունը, ինչպես հեղինակները նշում էին առաջաբաններում: Սա

⁵³ Այս գործը մեզ է հասել հայերեն հնագույն թղթյա ձեռագրում (Մատենադարան, № 2679), որպես երկու առանձին միավորներ (էջ 11բ, 19բ, 20ա, 28ա) Ա. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», Երևան, 1974, № 8:

⁵⁴ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1944, էջ 299:

⁵⁵ Ա. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», Երևան, 1974, № 8: Այս և մի քանի այլ նմուշներ բերում ենք սույն հատորում (№№ 7—10, 14, 18, 25—27, 61, 108, 198):

⁵⁶ Մատենադարան, ձեռ. № 3004, էջ 261ա—262 բ: Տե՛ս աստ, էջ 32—33:

ավետարանների հիշատակարանների սկզբնական ձևն է: Հետագայում պարզ «Փառքը» ձևափոխվում է, իսկ ձեռագրի բովանդակությունը ներկայացնելու փոխարեն, հաճախ վերամբարձ ու ճոճում ոճով ավետարանիչների ու ավետարանների խորհրդանիշներն են փառաբանվում՝ զանազան համեմատություններով:

Ը դարից հանդիպում ենք թարգմանական գործերի առավել կանոնավոր հիշատակարանների, գրված Կոստանդնուպոլսում, նշանավոր մատենագիր, մեկնիչ և թարգմանիչ Ստեփանոս Սյունեցու ձեռքով, որոնցում նշված են թարգմանվող գործը, նրա հեղինակը, թարգմանիչները, վայրը և այլ տվյալներ:

Այսպես. «Ե վեցհազարերորդի երկերիւրերորդի քսաներորդի չորրորդի ամի արարածոց աշխարհի, ըստ Յունարէն՝ թվոյ ի չորեքտասաներորդի ընդիքտիոնին, երկրորդ ամի թագաւորութեանն Անաստասի, թարգմանեցան գիրքըս Պարապմանց և Թղթոց սրբոյն Կիրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրի, ի ստոյգ արինակաց ի Կոստանդնուպոլսի, ի ձեռն Դավթի Հիւպատոսի և Թագաւորական սեղանոյ կենառի, եւ ի ձեռն Ստեփանոսի քերդողի, աշակերտի Մովսէսի Սիւնեաց Լպիսկոպոսի:

Արդ, մաղթեմ աստուածասէր պաշտամ[ն]այսդ սրբոյ սեղանոյ, որք առնոյք արինակ յայսմանէ, գրեսշիք և զբանս զայսոսիկ առ [ի] յիշատակ բարեխաւսութեան առ Քրիստոս, վի դրեալ եղիցիք և դուք ի դպրութեանն կենաց, ամէն»⁵⁷:

Կյուրեղ Աղեքսանդրացու Պարապմանց և Թղթոց գրքերը թարգմանվել են 715 թ., Բյուզանդիայի թագավոր Անաստասի թագավորության երկրորդ տարում, Կոստանդնուպոլսի ստույգ օրինակներից, Դավթի Հիւպատոսի և Ստեփանոս Սյունեցի քերթողի ձեռքով, որը Սյունյաց եպիսկոպոս Մովսէսի աշակերտն էր: Առաջին անգամ այստեղ է, որ հանդիպում ենք ձեռագրի հետ միասին հիշատակարանը արտագրելու վերաբերյալ թարգմանչի և գրչի խնդրանքին⁵⁸:

Պահպանվել է Սյունեցուց նաև՝ հեղինակային մի հիշատակարան, որը բավականին անորոշ է. չունի թվական, ստացողի և գրչի անուն, միայն գործի բնույթի պարզաբանումն է: Այդ Զորից Աւետարանչաց մեկնութիւնն է, որտեղ «Ե Մաթէոսեան Աւետարանն գրեցաւ ըստ կարգի, իսկ ի յայլ աւետարանիչսդ՝ որ ինչ մեկուսանայր ի Մաթէոսեան Աւետարանէն, և զայս ընծռեցի ձերոց հրամանի հնազանդեալ...»⁵⁹, դիմում է նա «պատուական քահանայապետին», որն, ինչպես նշում է Գ. Հովսեփյանը, Դավթի Արամուսեցի կաթողիկոսն է (728—741 թթ.)⁶⁰: Սույն մեկնության սկզբում Ստեփանոս Սյունեցին մեկնել է նաև համաբարբառի խորանները⁶¹:

Մինչև Թ դարի կեսերը ձեռագրերի թվակիր հիշատակարաններ թեև չկան, բայց հեղինակային հիշատակարանները և հիշատակարանային տվյալները հնարավորություն ընձեռեցին հիշատակարանների դարգացման, ձևավորման բնույթի մասին որոշ գաղափար կազմելու: Տարբեր դարերում, տար-

⁵⁷ Մատենադարան, ձեռ. № 1500, էջ 576ա, Տե՛ս աստ, էջ 24—25:

⁵⁸ Անդ:

⁵⁹ Մատենադարան, ձեռ. № 5551, էջ 233ա:

⁶⁰ Գ. Հովսեփյան, Ցիշատակարանք, էջ 57, ծթ. 1:

⁶¹ Ա. Մաքեռոյան, Վեհափառի Ավետարանը, «Էջմիածին», Ե, 1978, էջ 40:

բեր բնույթի հիշատակարաններում, հիշատակարանային այս կամ այն տար-
րը հետադադում համադրվում, զուգորդվում, հարմարեցվում է հիշատակա-
րանի ընդհանուր հյուսվածքին, որի կատարյալ օրինակին հանդիպում ենք
արդեն թ՝ դարում:

Դ

Նախորդ դարերից պահպանված թարգմանությունների ու անհատական
ստեղծագործությունների վիթխարի քանակը, հայ դպրության զարգացման
առաջադիմական նպատակամղումը, ձեռագրական սակավաթիվ, բայց օրի-
նակելի նմուշների գրչության արվեստի կատարելությունը, գրատեսակների
բազմազանությունը և մշակվածությունը, նրանց ըստ պատշաճին միաժա-
մանակյա կիրառությունը ձեռագրերում, մատյանների ձեռքի զանազանու-
թյունը, մագաղաթի, թանաքի որակը, ինչպես նաև այս ամենի մասին մա-
տենագրական վկայությունները ցույց են տալիս, որ հայ գրչության արվես-
տը Ե—Ը դարերում ունեցել է բավականին զարգացած մակարդակ:

Պետականությունը կորցրած հայ ժողովրդի կենսական նպատակը՝ պե-
տականության վերականգնումն էր, որի իրականացմանն էր ծառայում նաև
հայ դպրությունը: Անկախություն ձեռք բերելու փոխարեն, Հայաստանը է
գարի կեսերին ընկնում է արաբական տիրապետության տակ, որի դեմ ժո-
ղովրդի պայքարը չի դադարում: Մետաղյա զենքի կողքին մարտնչում էր նաև
նղեզնյա գրիչը: Նախնիների պատմագրական երկերի կողքին, որոնք բազ-
մացվում ու տարածվում էին, գրվում են նորերը, ստեղծվում են դավանա-
բանական նյութերի ժողովածուներ: Հայ մտավորականների մտահոգության
առարկան է դառնում հայ իրականության մեջ ճշգրիտ գիտությունների ար-
մատավորման խնդիրը: Անանիա Շիրակացին հորինում է «Քննիկոն» հան-
րագիտարանային դասագիրքը, որի մեջ ամփոփվում է հունական դաստիա-
րակության սիստեմի մեջ մտնող գիտելիքների հանրագումարը՝ հարմա-
րեցված հայ իրականությանը: Հայրենասեր հեղինակը թվաբանական խնդի-
րներում նույնիսկ փառաբանում է հայ հերոսների քաջությունը և խելքը, աշ-
խարհագրության բաժնում մոծում Հայաստանի և հարևան երկրների աշ-
խարհագրությունը. ընդ որում Հայաստանը ներկայացնում է պատմական
ամենաընդարձակ սահմաններով՝ որպեսզի այդ սահմանները չմոռացվեն:

Ը դարում կազմվում է դավանաբանական «Գիրք թղթոց», Հովհան
Օձնեցի իմաստասերը խմբագրում է Կանոնագիրք Հայոց ժողովածուն, Շա-
պուհ Բագրատունին և Ղևոնդ Նրեցը շարադրում են իրենց Պատմությունները,
Սողոմոն Մաքենացին կարգավորում է Տոնական ժողովածուն, ընդօրինակ-
վում են ազգային և թարգմանական դրական բազմաթիվ գործեր:

Թ՝ դարում գրչության արվեստի զարգացումը կապվում է Հայաստանի
ներքին և արտաքին հարաբերություններում տեղի ունեցած բարենպաստ
փոփոխությունների հետ, որոնք իրենց հերթին կապված էին ֆեոդալական
հարաբերությունների զարգացման և Արաբական խալիֆայության թուլաց-
ման հետ:

Հայաստանում այդ ժամանակ զորեղացել էին Բագրատունյաց, Արծրուն-
յաց և Սյունյաց նախարարական տները իրենց տիրույթներով: Ոչ միայն
անկանոն էին վճարում հարկերը արաբներին, այլև նվազեցրել էին հար-
կերի քանակը, որի հետևանքով աշխուժացել էր այդ իշխանությունների ներ-


րին կյանքը: «Հայոց իշխանների ժառանգական հողատիրության վերականգնումը, մի կողմից, և հարկերի նվազումը, մյուս կողմից, նպաստեցին երկրում սկսվող տնտեսական վերելքը և ամրապնդեցին անկախության համար մղվող պայքարի նյութական հնարավորությունները»⁶²: Ներքին և արտաքին նպաստավոր պայմանների հետևանքով հայ ժողովրդի դարավոր պայքարը պսակվեց հաջողությամբ, Հայաստանն ազատագրվեց օտար տիրապետությունից, պատմական Հայաստանի տարածքի մեծ մասի վրա հաստատվեց Բագրատունյաց հայկական թագավորությունը: Արշակունյաց թագավորության անկումից շորս և կես դար հետո վերականգնվեց Հայկական պետականությունը:

Ինքնուրույն պետականությունը հնարավորություններ է ստեղծում երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի զարգացման համար, երկրում արտադրվող նյութական բարիքները ծառայում են երկրի տնտեսական վերելքին և շինարարական աշխատանքներին: Քաղաքներում զարգանում են արհեստներն ու առևտուրը, փոխվում է կենցաղը: Կառուցվում են վանքեր և դրանց կից դպրոցներ: Հիմնվում են գրչատներ, բազմացվում ձեռագրեր, փոխվում է նրանց տեսքը՝ արտաքին և ներքին զարգարվածությամբ. մանրանկարչությունը և գեղեցիկ կազմերը, ժողովածուների աշխարհականացվող բովանդակությունը, նոր գրանյութ թղթի կիրառությունը, դյուրագիծ բոլորգրի՝ գրչության հիմնական գիր դառնալը և այլ հանգամանքներ նպաստում են, որ ձեռագիրը ավելի հիմնավոր մտնի կենցաղի մեջ: Զեռագիր ունենալ ցանկացողների թիվը մեծանում է, ավելի շատանում են ձեռագիր ձեռքերողներն ու նվիրաբերողները: Այս բոլորը նպաստում են գրչության արվեստի զարգացմանը և փոփոխություն մտցնում նաև հիշատակարանների ձևի և բովանդակության մեջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների նախնական, համեմատաբար կատարյալ օրինակը մեղ տալիս է լազարյան Ավետարանը: Թվականն հայտնի առաջին ձեռագրի սեղմ և փոքրիկ հիշատակարանը, շատ քիչ բացառությամբ, ընդգրկում է այն հարցումների պատասխանները, որոնք կազմում են հայերեն հիշատակարանների կմախքը, և որոնց շուրջը հյուսվում են հետագա հարուստ բովանդակությամբ հիշատակարանները:

Լազարյան Ավետարանի գրիչ Սահակ Վանանդացին Հիշատակարանում նախ փառաբանում է ամենասուրբ երրորդությունը (ա)՝ «Փառք պատիւ եւ գովութիւն Սուրբ Երեմիայի Երեմիայի, այժմ եւ հաճապագ, յաւիտեանս, ամէն», խնդրում է օգտագործողներին՝ հիշել իրեն (բ)՝ «Զգրաւդ սուրա եւ զաշխատաւորսս, որ ոք ընթեռնու եւ կամ գրեսցէ յաւիտեանս, յարժանաւոր աղաթս ձեռ յիշեսցիք»: Ներկայացնում է ձեռագիրը (գ)՝ «Գրեցաւ սուրբ Աւետարանս այս», գրչության ժամանակը (դ)՝ «ՅԼԶ (887) թուականութեան Հայոց», այն հաստատելով ժամանակի հոգևոր և մարմնավոր իշխանությունների ներկայացուցիչների վկայակոչմամբ (ե)՝ «Ի հայրապետութեանն Գեորգայ Հայոց կաթաղիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի, եւ ի տէրութեանն Սբատայ Բագրատունւոյ», հիշում է իրեն և հարազատներին (զ)՝ «Ես Սահակ Վանանդացի, որդի Վարդա Վանանդացոյ, որում կրկին Մլեն կոչէին... (շորս տող մաշված և անընթեռնելի է) «Ի մաքրութիւն հոգւոյ իմոյ եւ

⁶² «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 15:



կողակցի իմոյ գտանել ողորմութիւն յաուրն այցելութեան», և խնդրում է մեղքերի թողութիւն (է)՝ «Աղաչեմ զձեզ սիրողք Քրիստոսի, սրբ ընթեռնու գսուրք Աւետարանդ, անմոռաց յիշմամբ հայցել յամենեցունց յաւաքէն զթողութիւն իմոց յանցանաց»⁶³։ Եթե հաշվի առնենք, որ գրչութեան վայրը առանձին չի հիշում, որովհետեւ այն հասկացվում է իր և հոր մականուններին (ը)՝ «Վանանդացի», և ստացողը նշված չէ, որովհետեւ գրիչը նաև ստացողն է» (թ)՝ կունենանք հայերեն ձեռագրի հիշատակարանի նախնական օրինակի անթերի նմուշ։

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները հիմնականում պահպանելով կառուցվածքային սույն առանձնահատկութիւնները, հետագայում փոփոխութիւններ են կրում բովանդակութեան հարստացման տեսակետից, երբեմն ընդարձակելով բաղադրիչ տարրերից մեկի կամ մի քանիսի մասին տեղեկութիւնները, կամ, որպէս հիշատակագրութիւն, ձեռագրական որոշ միավորներում, խիստ համառոտ, կրկնվում են հաճախակի (ինչպէս Յայսմաւորք, Տօնական և այդ կարգի ժողովածուներ) ու գրվում համարյա ամեն մի վարքից, վկայաբանութիւնից կամ ճառից հետո։

Հիշատակարանների հարստացումն ու ընդարձակումը կախված էր գրիչների կարողութիւնից ու նախասիրութիւնից, ստացողի ցանկութիւնից, ժամանակաշրջանի իրադարձութիւններից։ Հաճախ նրանք կաղապարում էին այս կամ այն հիշատակարանը, փոխելով միայն դեմքերն ու դեպքերը⁶⁴։

⁶³ Մատենադարան, ձեռ. № 6200, էջ 299—299բ։ Հմմտ. Ա. Մաթևոսյան, Լազարյան ձեռարանի հնագույն ձեռագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 128—130։

⁶⁴ Նախ ասենք, որ ձեռագրի գրիչները պահում էին հիշատակարանների կաղապարները ստ բովանդակութեան, բաց թողնելով անունների և թվականների տեղերը (դրելով՝ «այս անուն»), որոնք պետք է լրացվեր ըստ պատշաճի։ Ահա այդպիսի մի օրինակ, որը վերաբերում է Մանրուսումնք կամ Խաղզիրք երաժշտական ժողովածուներին։ Այն քաղում ենք Մատենադարանի № 2335 ձեռագրի 181բ էջից, որի առաջին տողի դիմաց, լուսանցքում գրված է «յիշ», այսինքն՝ «յիշատակարան»։

«[Փ]առք եղակի տէրութեանն և եռահիսակ դաւանութեանն։ Համագոյ, համապայծառ, համագաղափար, զուգակշիռ, վրսեմագոյ, ինքնագոյ էութեանն և միութեանն, Հօր և Որդու և Հոգւոյն Սրբոյ, այժմ և անպայման յաւիտենիւ, ամէն։

Արդ յանգ ելեալ աւարտեցաւ հոգիարուի մատենան, որ կոչի Մանրուսումն, ի շրջագայութեան Հայոց տումարի (այս չափ), ի դաւառս (այս աւել), ի հայրապետութեան տեառն (այս աւել), ի յերկնահանգեալ և ի գերահռչակ և ի հրեշտակածն և յաստուածաբանակ վանքս որ կոչի (այս աւել), որ նման է վերինն Երուսաղէմի, ընդ հովանեալ (այս աւել), ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս (այս աւել), որ է վարուքն մաքուր, բնութեամբ հեզ՝ լեզուան քաղցր, սրտին առատ, իմաստուն, որպէս զանուանակիցն իւր, աւտարասէր որպէս Աբրահամ (որչափ որ կամիս՝ ասայ), առ ոտս (այս առաջնորդի), ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրիչի (այս աւել)։

Արդ ստացաւ կրօնաւոր ոմն (այս աւել), որ է ժիր և արի ի գործս առաքինութեան, անապատասուն, վարժեալ և սնեալ առ ոտս (այս աւել), իբրև զլապտեր վառեալ ի մէջ եկեցեւոյ, և իբրև զանուշահօտ խունկ հաճոյացեալ Աստուծոյ, և իբրև ծիծառն բանաւոր կանգնեալ ի մէջ տաճարի, և որպէս զմէջդու կարօտեալ երկնային ցօղին, այսպէս և սա ցանկացաւ եղև այսմ գրոցս և ետ գրել զսա ի վայելումն անձին իւրոյ, և յիշատակ ծնաւդայ իւրոյ։

Արդ աղաչեմ զամենեւեան, որք հանդիպիք սմա, ընդ նմին և զիս զանարժան զծաւոս (այս աւել), որ կաման Աստուծոյ սկսայ և աւգնականութեամբ նորին կատարեցի, յիշեցէք Աստուած ողորմայիւ միով, զի կարող է Աստուած ի ձեռն այլոց՝ այլոց ողորմութիւն առնել, և ձեզ դիւրին է ասելն և մեզ կարի պիտանի, և ձեզ յիշողացդ և մեզ յուսուցելոցս ողորմեացի Քրիստոս Աստուած։

Երբեմն ընդարձակելով հիշատակարանը, վերածում էին պատմագրական փոքրիկ երկի: Դեռևս 893 թ. Ստեփանոս գրիչը Մաշտոց Եղվարդցու կարգավորած Հայոց եկեղեցու ծխարան-Մաշտոցը ընդօրինակելիս, հիշատակարանին ձուլում է կաթողիկոսի վարքը և ստեղծում հիշատակարանի մի եղանակավորում, որին հանդիպում ենք նաև հետո:

Գրիգոր Նարեկացու Ողբերգության Մատյանի հիշատակարանին միակցվում է Նարեկացու վարքը, Ներսես Լամբրոնացու Սաղմոսաց Մեկնության հիշատակարանին՝ Լամբրոնացու վարքը, Հեթում արքայորդու Ճաշոցի հիշատակարանին՝ ստացողի տոհմաբանությունը, կամ ձեռագրի վերջում գրիչը բացառապես նկարագրում է իր ապրած ժամանակաշրջանը, հիշատակարանային աննշան տվյալներով՝ ինչպես Գրիգոր Խլաթեցին՝ Գանձարանի վերջում, որն հայտնի է «Հիշատակարան աղէտից» վերնագրով: Սրանք ձեռագրի հիշատակարաններ են՝ նրա բաղադրիչներից մեկի արտակարգ հարստացմամբ:

Ժ դարից հետո մատենագրիները իրենց պատմագրական երկերը, առաջաբանից բացի, օժտում են նաև հիշատակարաններով: Նարեկացին ոչ միայն իր Մեկնությունները, այլ նաև Մատենան ողբերգութեան պոեմը ավարտում է հիշատակարանով—«Յիշատակարան մատենիս դրութեան» խորագրով, Ստեփանոս Ասողիկը՝ իր Պատմութիւն Տիեզերական երկը՝ «Բան վախճանի փառատրական ի սպառուած Յիշատակարանիս, Արիստակես Լաստիվեցին՝ Վասն անցիցն անցելոցս պատմությունը՝ «Բան յիշատակարանի նոյն գրոյս» հիշատակարաններով, իսկ Մաթեոս Ուռհայեցին հիշատակարան է թողնում գլուխների վերջում, որոնց երկրորդ մասերը առաջաբան են հաջորդ գլուխների:

Հեղինակային հիշատակարանները ընդօրինակվում, իսկ հետագայում հրատարակվում են այդ գործերին կից, իսկ երբեմն էլ մեկնաբանվում՝ երբ մեկնվում էին այդ երկերը, ինչպես Նարեկացու Մատյանի հիշատակարանը⁶⁵:

Ե

Մանթանանք հիշատակարանների բաղադրիչներին և նրանց առանձնահատկություններին:

Միջնադարում ոչինչ առանց Աստծու միջամտության չէր կատարվում: Ըստ այդմ գրքերի ընդօրինակության գործը նույնպես սկսվում և ավարտվում էր Սուրբ Երրորդության շնորհիվ:

Հիշատակարանները սովորաբար սկսում են «Փառքով»: Քանի որ բոլոր դրությունները, մատյանները, ստեղծագործությունները ավարտվում են «Փառքով», և որովհետև հիշատակարանը նույնպես արձանագրում է ձեռագրի ավարտը, բնականաբար այն պետք է սկսվեր դրանով: «Փառքը» ավետում է ձեռագրի ավարտը: Սուրբ երրորդությունը գրչին կարողություն է ավել, որ նա «կենաւք տառապանաւք եւ բազում պանդխտութեամբ» ավարտի սկսած գործը, որը վեր էր իր կարողությունից, «Զի որպէս նաւավարին յափն ծովուն հասանելն խնդութիւն է, նույնպէս և գրչի յետին գիծս»:

«Փառքում» այնուհետև դրվատվում է ընդօրինակվող ձեռագիրը, նրա պարունակությունը: Այս առումով, բնականաբար, Աւետարանի հիշատա-

⁶⁵ Մատենադարան, ձեռ. № 5518, էջ 304բ:

կարանի դրվատանքը տարբերվում է մի այլ, ասենք Յայսմավուրքի դրվատանքից: «Փառքում» գովերգվում է ձեռագրի նախօրինակը կամ գաղափար օրինակը, որը եղել է «ստույգ և ընտիր»: Նույնիսկ երբեմն հիշվում է, թե որ նշանավոր վարդապետը կամ հոետորն է այն սրբագրել, կամ որ թվականից է այդ օրինակը: Սույն տեղեկությունները մատենագրական-ձեռագրական մեծ արժեք ունեն, որոնք հաճախ անհայտացած հրկերի ու ձեռագրերի մասին գաղափար են տալիս և լրացնում հայ գրչության արվեստի մասին մեր գիտելիքները:

Պատահում է երբեմն, որ «Փառքը» հիշատակարանի ամենաընդարձակ մասն է կազմում և արժեքավոր քիչ բան է տալիս:

Այնուհետև սկսվում է պատվիրատուի (ստացող) դրվատանքը: Այստեղ էլ գովերգությունը շատ է: Հաճախ նրանք կոչվում են «հանճարեղ», «իմաստուն այր» և այլն: Սակայն երբ մենք քննում ենք իրողությունը ըստ էության, և բառերը՝ ոչ այսօրվա ըմբռնմամբ, մեղմանում է շփաղանցությունը:

Հայերեն ձեռագրերը մեծ մասամբ գրվել են անապահովության պայմաններում: Հիշատակարանները լի են իրականության սրտաճմլիկ նկարագրություններով, որոնք անտանելի լինելուց առաջ անհավատալի են թվում: Մանր ու տաժանելի այս պայմաններում, ահա մեկը. «Ի հալալ արդեանց իւրոց», կամ «Ի քրտնածին աշխատանաց» ձեռագիր է պատվիրում, այսինքն՝ վերը փառաբանած գրքի արժեքը գիտակցում է, գգում նրա անհրաժեշտությունը իր և ժողովրդի համար, և ստանում է այդ աստվածային գանձը, որը կրոնական, մեկնողական, պատմական, գեղարվեստական բովանդակություն ունի, և նվիրում որևէ եկեղեցու՝ մանուկներ կրթելու համար, որևէ գյուղի, որպեսզի առանց Աւետարանի շմեհ, որն այնքան անհրաժեշտ է այլասեռ տիրապետության տակ իր դավանանքը պահպանելու համար: Ստացողների մեջ հանդիպում ենք թագավորի ու մշակի, դպրի ու կաթողիկոսի, այրի կնոջ ու վաճառականի, վանքի միաբանության և գյուղի ամբողջ համայնքի:

Ստացողները նաև գրչության արվեստին տոն տվողներ էին: Ձեռագրի պատվերը տալուց հետո, նրանց ցանկությամբ էր ընտրվում գրատեսակը, մատյանի ձևավորման շափն ու որակը, գրանյութն ու գաղափար օրինակը, և ոչ միայն պահանջում էին, այլ անձամբ միջամտում: Ծրեմիա քահանան գրում է, որ Գևորգ Սկեռացու Ծսայու մեկնության համար «երկու անգամ առ թագաւորն (Հեթում Բ) իմ երթեալ խնդրեցի զարարեալ աւրինակն և և ետ գրել զսա լևոն դպրի լաւ և արհեստի գրի...»: Ստացողների գործունեությունը ստիպում էր, որ գրիչները իրենց հմտությունը կատարելագործեն, այլապես պատվեր չէին ստանա: Ստացողների հոծ բանակին ենք պարտական հայերեն ձեռագրերի նյութական կողմի ապահովման և փրկության համար:

Հաջորդը ձեռագրի գրչության տեղի և ժամանակի գրանցումներն են: Որտե՞ղ է գրվել ձեռագիրը: Ձեռագրերի գրչության վայրերը հայ միջնադարյան մշակութի կարևոր կենտրոններն են, ուր ծաղկել են ոչ միայն գիրն ու գրչությունը, այլև գիտությունն ու գրականությունը: Դրանց մեծ մասը դպրոցներ են եղել, իրենց ուսուցիչներով, աշակերտներով, ուսումնական ծրագրերով ու ներքին կյանքով:

Հայ գրչության կենտրոնները հայ ժողովրդի աշխարհասփյուռ պանդխտության հավերժական մեաներն են: Որտեղ ոտք է դրել հայը, այնտեղ ձե-

ազդիր է գրել, հիշատակարան է հորինել և հիշել այդ ևրկիրը. Բյուզանդիա ու Խալիֆա, Իրան ու Հնդկաստան, Հեհաստան ու Ռուսաստան, Սիրիա ու Հրեաստան և այլ երկրներ։ Ուստի հիշատակարանները, ոչ միայն Հայոց, այլև հիշյալ երկրների պատմության համար արժեքավոր աղբյուրներ են դառնում։

Գրչության վայրերի հիշատակագրությունները հնարավորություն են ըն-
ձեռում վերականգնելու, վերաշարադրելու հայ վանքերի, դպրոցների, հա-
մալսարանների և մշակութային այլ կենտրոնների պատմությունը։

Նթե գրչության տեղը ձեռագրի ծննդավայրն է, ապա ժամանակի նշա-
նակումը՝ ծննդյան թվականը։

Հիշատակարանում ձեռագրի թվականը տարբեր ժամանակներում նշա-
նակվել է տարբեր եղանակներով։ Գրիչները թվականը գրելուց բացի այն
ամրապնդում և հավաստում են այդ ժամանակի հոգևոր և աշխարհիկ առաջ-
նորդներին հիշելով, նրանց կատարած գործը արձանագրելով և, մանավանդ,
այդ ժամանակ տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, ժողո-
վրդի ծանր վիճակը, տառապանքները, ավերածությունները նկարագրելով։

Նթե մինչև այստեղ հիշատակարանը պատմամշակութային երևույթների
արձանագրություն էր, ապա այսուհետև զուտ պատմական, քաղաքական,
սոցիալական երևույթների, հայ ժողովրդի տառապանքների ականատեսի
դրվով կատարված նկարագրությունը. «Դրանք անգնահատելի փաստալից
աղբյուրներ են ժամանակի պատմության մի շարք բնագավառների ուսում-
նասիրման համար,— նշում է Լ. Խաչիկյանը,— գրված լինելով պատմվող
ղեկավարին ականատես և ականջալուր մարդկանց կողմից, նրանց հաղորդած
տեղեկությունները վստահելի են, նրանց հեղինակները ըստ մեծի մասի, լի-
նելով հասարակության աշխատավոր խավեղից... մոտ են կանգնած եղել
ժողովրդին... դրանց և նախապես կարևոր պատմական տվյալներ, ինչ-
պես և կենցաղային մանրուքներ, որոնք անտեսվել կամ վրիպել են միջ-
նադարյան պատմագիրներից շատերի տեսադաշտից...»⁶⁸։

Հիշատակարանների այն մասը, ուր նկարագրվում են նվաճողների բար-
բարոսությունները և հայ ժողովրդի կրած տառապանքները, վերածվում են
առաջին մասի հակադրության. մի կողմից, մարդկային դարավոր մշակույ-
թի նորացում, պահպանում, արարում և դրանց փառաբանություն ու դրվա-
տում, որին ձեռնամուխ են ևղև հայ գրիչն ու ստացողը, մյուս կողմից՝ այդ
ստեղծագործ ժողովրդի ոչնչացում, հուշարձանների կործանում, ձեռագրերի
այրում՝ մարդկային ցեղի ու մշակույթի թշնամի նվաճողների կողմից։

Հիշատակարանի վերջին մասը հիշատակն է, ուր վավերացվում է ձեռա-
գրի ստեղծման նպատակը, այսինքն ո՞ւմ և ինչի՞ համար է գրվել տվյալ մատ-
յանը։

Ձեռագրերի գրության շարժառիթները բազմաթիվ են, սեփական ըն-
թերցանության, ուսման համար, որևէ մեկի կամ ընտանիքի հիշատակի հա-
մար, որը անպատճառ նվիրվում է մոտակա վանքին, դպրոցին կամ ուսուց-
չին, անձնական կյանքի այս կամ այն նշանավոր իրադարձության առթիվ
և այլն, և այլն։

⁶⁸ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, Առա-
ջաբան, էջ VII։

Հիշատակարանի այս մասում հիշվում են գրչության շարժառիթներին առնչվող բոլոր անձինք, իրենց մերձավորներով, հաճախ այնպիսի մանրամասնությամբ, որ կարելի է կազմել նրանց տոհմածառը, ընդ որում հիշվում են նախ հանգուցյալները, ապա՝ ողջերը։ Այստեղ արձանագրվում է նաև նվիրատվության փաստը, — ո՞ւմ է պատկանում ձեռագիրը, և ո՞վ է նրա վայելողը։

Հիշատակարաններից տեղեկանում ենք նաև գրիչների մասին։ Հայ ժողովրդի գրավոր մշակույթի ստեղծման, փոխանցման, պահպանման անխոնջ մշակներն են գրիչները, որոնք ոչ միայն ընդօրինակում, սրբագրում, խմբագրում ու զարդարում էին ձեռագրերը, այլև հիշատակարաններ էին գրում, որոնց մեջ փառաբանում, խրախուսում, ոգևորում էին ստացողներին, ներկայացնում իրենց ժամանակը, ինչպես որ ըմբռնում ու տեսնում էին, և ամենից քիչ իրենց մասին էին հիշում, այն էլ միայն նվաստացնող մակդիրներով՝ «անարժան», «փցուն», «անգէտ», «գրաւէր» և այլն։ Գրիչները գրչության արվեստի գործագրողներն են և գիտության ու մշակույթի գործավորները, ուստի իրենց աշխատանքը նմանեցնում են երկրագործի աշխատանքին. «Ես՝ տառապեալ գրաւղս... զտիւն ամենայն տքնեալ ի վերայ փայտեղէն տախտակի. եղեգնակոյս արաւրով և խոստն ալաւսաւք, հինդ շար կենդանի ամլաւք, եռահիւսակ, միահեծան ընդ միմեանս շարայարեցի դբանս...»⁶⁷։ Ծանր էր գրչի աշխատանքը՝ գիտելիք, համբերություն, հավատ, նվիրվածություն էր պետք ձեռագիր ստեղծելու համար. ուստի նրանք տիրապետում էին «արուեստի գրոյն» վայելչագրությանը, քերթողությանը կամ քերականությանը «որ կարգեալ են մեծն թարգմանիչքն իսկ», որպես-ւի գրիչները կարողանան «ստուգիւ գաղափարեալ զգիրս», և «հմտութիւն բանին», որպեսզի քաջատեղյակ լինեն ընդօրինակվող բնագրին։

Հմուտ գրիչները կոչվում էին «հռետոր», «քաջ քարտող», «գրչապետ» և այլն։ Սակայն միշտ չէ որ հմուտներն էին ընդօրինակում։ Շատերը միջոց չունենալով ձեռագիր գրել տալու, իրենք էին ընդօրինակում կամ ստիպված հանձն էին առնում կատարել այդ աշխատանքը։ Երբեմն գրում էին «համարձակութեամբ գրչի առաւել քան գիտութեամբ արուեստի» կամ «թեև գիրս հոռի է, բայց օրինակիս ընտրութիւնն մեծագոյն է», և կամ «ես դրագիր չէի, այլ հարկ արարին ի վերայ իմ գրել»։ Ուրեմն հիշատակարաններն ռգտագործելիս պետք է հաշվի առնել սույն հանգամանքը, ճանաչել գրչին։

Գրիչները հիշատակարաններում, առավել հիշատակագրություններում, իրենց ազատ էին զգում, փիլիսոփայում էին, գրում պատկերավոր լեզվով՝ արձակ և չափածո, խոսքը հաճախ համեմտում առակներով ու ասացվածքներով, երկրի ու իրենց վիշտն են ողբում, ցավը լալիս, սիրտը բաց անում ընթերցողի առաջ։ Ոչ մի ձեռագիր, այս տեսակետից, բացառություն չի կադմում, իսկ հիշատակարանների ժողովածուները դրանում համոզվելու շատ առիթներ են տալիս։ Հայրենիքը խոշտանգող բարբարոսական արշավանքներից մեկի ականատեսը գրում է. «Այժմ աւելի են գերիքն յաշխարհի քան զաղատքն, և ամենայն սիրտ բեկեալ եւ զարհասն առաջի ունի. Երանի որ ոչ էր ժամս այս»⁶⁸ հուսակտուր ավարտում է խոսքը։

⁶⁷ Գ. Հովսեփյան. Ցիշատակարանք, էջ 803։

⁶⁸ Սյուրմեյան. Ցուցակ Հալէպի, հ. Ա, Երուսաղեմ, 1935, էջ 353։

«Մի մեղադրէ՛ք ծաղկիս վատութեան, միտս շմորել էր, արտասուքս ի ղեղրունքս կու իւաունէր ի տգոցս կսկծուն, որ յԱստուած փոխեցան Գ. տղայ, որ նման էին ոսկւոյ և մարդարտի: Աշերս չէր յիստակել արտասուաց, աւա՛ղ և զկկկոյս, որ զաւրն ի բուն ձեռն ի ծնաւտիս հայիմ յնփրատէս, ա՛հ հանեմ հոգւոյս»⁶⁹: Ստեփանոս Կաղղվանցին թշնամու վայրագությունները նկարագրելիս կարծես Եղիշեցի է գրիչն առել. «... Եւ զնազելի տիկնայս և զաղախնայս և զկրօնաւորեալ կուսանսն՝ զդատերս մեծատանց և զաղքատաց հրասլարակաւազ առնէին և զանբիծ մանկունսն ի գիրկս մարցն սպանանէին, և զարիւնն ընդ կաթին խառնեալ՝ տային մաւրն ըմպել, և ընդ սրբութիւն սրբոցն զանհնարին շարիսն գործէին, զոր անվայելուջ համարեցաք զճառելն:

Ո՛վ հրաշիցն անճառութեան, ա՛հ աստուածասէր եղբարք, ոչ կարէ բերան պատմել և ոչ լեզու ճառել զանհնարին աղէտն և զհրաբորբոք կրակիծն...»⁷⁰:

9

Հիշատակարաններում գրիչները փառաբանում, օրհնում, ոգևորում են հայրենիքին, ժողովրդին, հավատին անձնվիրաբար ծառայող ստացողներին, լինեն դրանք շարքային թե բարձրաստիճան, աշխարհական թե հոգևորական: Ավետիս գրիչը Կեռան թագուհու համար գրած Ավետարանի հիշատակարանում ստացող թագուհուն ցանկանում է, որ իր առաջնեկին, որը փոխարինելու է թագավորին, լավ դաստիարակել և հասցնել ռի շափ հասակի կատարմանն... Ժառանգել զթագն հայրենի, և կեցեալ ըստ արինացն Աստուծոյ վարժեալ գրովք աստուածայնովք և ղինուք սպառազինաւք՝ յաղթող լինել ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի»⁷¹: Իսկ Հովսեփ գրիչը մեծ գոհունակությամբ է արձանագրում Ռուբեն սպարապետի Սալահետինի գոռոցներին տված պատասխանը և գործողության վճռականությունը: Եգիպտոսը, Դամասկոսը, Եգեսիան և Ամիթը գրավելուց հետո Սալահետինը չլռգաւ անց գետովն Եփրատ, եկն առ ստորոտով Սուրբ լերինն, գոռայր ընդդէմ սպարապետին Հայոց Ռուբինայ եւ լսէր խստագոյն պատասխանիս ի նմանէ. կամէր մտանել յաշխարհս քրիստոնէից և ոչ կարէր, վասն զի եւ քրիստոնէից զունդն զաւրածողով էին ընդդէմ նորա, մահ ի մտի եղեալ ամենեցուն...»⁷²:

Եվ այսպես հաճախակի դրվատվում են հայրենասիրական արարքները, նշանակում դավաճանությունը, խրախուսվում գիտության և ուսման հետեւելը, ձեռագիր գրելը, գրել տալը, պահպանելը, հաջորդ սերունդներին փոխանցելը: Հիշատակարաններում կան խորհուրդներ, որոնց իմանալը պարտադիր է ձեռագիրն ուսումնասիրողներին. «Վարդապետք ասեն թէ անպատշաճ է զգիտութիւնս խնայել և ոչ բաշխել ալլոց, վասն բազում պատճառի... և անպատշաճ է զգիտութիւն և զուսումն խնայել և թաքուցանել»⁷³: Չեռա-

⁶⁹ Գ. Սրվանդտյան, Թորոս Աղբար, հ. Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 374:

⁷⁰ Բ. Կյուլեւսեւյան, Ծուցակ Անկիւրիոյ, Անթիւիաս, 1957, էջ 1118:

⁷¹ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 416:

⁷² Ն. Պաղարյան, Ծուցակ, Երուսաղեմի, հ. Թ, Երուսաղեմ, 1979, էջ 350: (Ընդգծումն իմն է):

⁷³ Մ. Քեշիշյան, Ծուցակ Զմմառի, Վիեննա, 1964, էջ 394:

դիրը չպիտք է թաքցնել ընթերցողից. «Զի զկնն զինաւորին է՝ Բայց՝ սպիտակ լաթով բռնէք և փառավոր պահէք,—ղգուշացնում է մեկ ուրիշը,—զի ամեն գրի մեկ աչք է սպիտակացուցած—գրած», քանի որ անխնամ վարվողներին լավ բան չի սպասում. «Ով որ անարժան բացիլ է և կարգացել է, նա իւրն աղէկ չէ եղեր»⁷⁴:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում քաղաքական անցուղարձերն արտացոլող մասերը վաղուց են օգտագործվել պատմագրական երկերում և պատմագիտական ուսումնասիրություններում, որպէս հավաստի սկզբնաղբւրիւրներ, նրանց հասարակական-քաղաքական մշակութային կյանքի տարբեր ոլորտներ ընգրկող բնույթը ստիպում էր, որ հիշատակարանների օգտագործման ավելի գործնական և առավել նպատակահարմար եղանակներ գտնվեն: Եվ այն գտնվեց: Դրանք ժողովածուներ են, որոնցում ժամանակագրական կարգով հավաքվելու էին ձեռագրերի հիշատակարանները: Այդ ժողովածուներում ձեռագրական առանձին հիշատակարանները, որոնք գրվել են տարբեր մարդկանց կողմից, տարբեր վայրերում, մերթ հպանցիկ, մերթ հիմնավոր արձագանքել կյանքի այս կամ այն երևույթին, հավաքվում—դասավորվում են առանձին ժողովածուի մեջ ըստ որոշակի ժամանակահատվածի տարիների, և աղոտ արձագանքներն ու միակողմանի ակնարկները համադրվելով՝ լրացնում, ամբողջացնում են միմյանց, թանձրացնում են փաստերը և դրանք դարձնում վավերական և վստահելի:

Հայերեն ձեռագրերի ժողովածուների մեջ առանձին տարիներով հավաքված հիշատակարանները ըստ գրչութայն վայրերի իրենց արտացոլումն են գտնում տեղանունների ցանկում, իսկ ըստ ձեռագրերը գրողների, ստացողների և այլ մասնակիցների՝ հավաքվում, դասդասվում են անձանունների ցանկում: Ուսումնասիրողը ձեռքի տակ է ունենում ձեռագրի հիշատակարանը՝ գրչութայն հանգամանքներով՝ որոշակի ժամանակի և տարածության մեջ: Զեռագրերի հիշատակարանների ժողովածուներն, այսպիսով դառնում են ժամանակագրական որոշ սահմաններում պատմագրական հսկայական նյութ ամփոփող մատենագրական նոր, ամբողջական մատյաններ, որոնց նշանակությունը անգնահատելի է հայ ժողովրդի պատմության, և մեզ՝ հարևան ժողովուրդների, ինչպես նաև այն երկրների պատմության համար. որտեղ գրվել են այդ հիշատակարանները:

⁷⁴ Մատենադարան, ձեռ. № 177, էջ 469ա: Գրիչներ առանձին վերաբերմունք ունեն իրենց գրած հիշատակարանի նկատմամբ: Նրանք շահագրգռված են նրա առկայությամբ և հարատևող գոյությամբ, որպէս ձեռագրի անքակտելի մասի, որպէս նրա ստեղծման պատմության և ստեղծողների հիշատակի վավերագրի: Ուստի հաճախ պատվիրում էին, որ ձեռագիրը կարգալիս, ընթերցվի նաև հիշատակարանը. «Աստուած զայն քահանան և զայն տանուտէրն արհնէ, որ Աւետարանս լաւ պահի և զյիշատակարանս կարդալ տայ...»: Նրանք բողոքում են հիշատակարանը եղծողների, անունները փոխողների դեմ, որպէս շար սովորություն: «Որք ժառանգէք զսա,—խնդրում է Հովհաննէս գրիչը,—անուն կամ գիր մի քերէք զառաջնոցն ու զձերն ի տեղն գրէք, ապա՝ յալլ տեղի գրեցէք զձերն անուն... Մի, մի գործէք, զի շար է և մեծ շար» (Մատենադարան, ձեռ. № 5708, էջ 130ա): Պարսամ գրիչը ավելի գործնական միջոց է առաջարկում. «Դարձեալ կրկին և երեքկին» աղաչելով որ «մի առնիցէք զշար սովորութիւնն հատանել զյիշատակարանս գրոց», նրան կից մի քանի անգրել թուղթ է թողնում և գրում. «Արդ՝ ահա թողաք զկնի սորա յուղվ թուղթ անգիր. եթէ կամիցիք, անդ գրեսցիք զձերն և զմերս յիշատակ թողցիք աստ» (Մատենադարան, ձեռ. № 4130, էջ 688բ):

Այդ է պատճառը, որ ոչ միայն հրապարկ են դալիս հիշատակարանները նորանոր ժողովածուներ, այլև թարգմանվում են այլ լեզուներով⁷⁶։

Ե—ԺԲ դարերից մեզ են հասել իրենց կատարելիությամբ, քանակով և ծավալով հիշատակարանային տարբեր միավորներ։ Դրանց մի հատորում միասին հրատարակելը թեևագրում է ներկայացնելու յուրահատուկ եղանակ։ Սովորաբար հիշատակարանները ժողովածուներում բերվում են ըստ տարիների. յուրաքանչյուր տարի սկսվում է նոր էջից, գլխազարդելով։ Նրա վերևում գրվում են հայկական (տառերով) և փրկչական (թվերով) թվականները, որոնք այնուհետև դրվում են այդ թվականի բոլոր հիշատակարանները։ Վաղեցնող էջերի սկզբում՝ գծի վրա, անկախ այն բանից, թե էջում քանի հիշատակարան է տեղավորված։ Եվ այդպես հաջորդ տարիները։ Այլ է վիճակը սույն հատորում։ Քանի որ Ե, Ձ, Է, Ը, Թ, Ժ, ԺԱ դարերից հիշատակարանները կամ հիշատակային բնույթի միավորները բոլոր տարիներից չեն, այլ հրբեմն մի քանի տասնամյակից մի միավոր է միայն մեղ հայտնի, որ դրանց մի մասը անթվական է և ենթադրաբար տեղավորված այդ դարում, մենք նոր էջով սկսում և գլխազարդի վրա ոչ թե տարին, այլ դարն ենք նշանակում, և այն կրկնում այդ դարի բոլոր հիշատակարանները ընդգրկող էջերի սկզբում։ Ե, Ձ դարերի հիշատակարանները ներկայացնում ենք անհնդհատ շարահարությամբ, որոնք իրարից անշատվում են հերթական համարներով։

Է, Ը, Թ, ԺԱ դարերի հիշատակարանները նույն ձևով ենք ներկայացնում, բայց միավորները իրարից անշատվում են ոչ միայն հերթական համարներով, այլ նաև գրության թվականներով, որոնք դրվում են համապատասխան միավորի վերնագրի ձախ (հայկական) և աջ (փրկչական) լուսանցամեծ կողմերում։ Քանի որ հայկականը լրիվ գործածություն չունեն, հարմարեցնում ենք փրկչականին, 551-ի վրա ավելացնելով համապատասխան թիվ։ ԺԲ դարի հիշատակարանները, որոնք քանակով, կատարելությամբ և ծավալով տարբերվում են նախորդ դարերի հիշատակարաններից, ներկայացնում ենք ավանդական ձևով, ամեն մի տարին սկսելով նոր էջից։

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

⁷⁶ Այդ մասին տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուները» առաջաբանը մեր «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար» հատորում, էջ 5—11։ Տե՛ս նաև՝ Հ. Բախչեյան, Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 1980։

